ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ. meo@ypc.am

ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի եզրակացությունը

«Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի՝ «Ճանաչել Փարավոնին» հոդվածի վերաբերյալ

2011 թվականի նոյեմբերի 2-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի փոխտնօրեն Մհեր Ղալեչյանը՝ խնդրելով ժուռնալիստական էթիկայի տեսանկյունից եզրակացություն տալ թերթի 2011 թվականի ապրիլի 9-ի համարում հրապարակված «Ճանաչել Փարավոնին» հոդվածի վերաբերյալ:

Քննարկելով «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի 2011 թվականի ապրիլի 9-ի համարում հրապարակված ‘Ճանաչել Փարավոնին’ հոդվածի համապատասխանությունը ԶԼՄ-ների Վարքականոնին, Դիտորդ մարմինն արձանագրում է հետեւյալը.

Հրապարակման թեման ներկայացնում է որոշակի հանրային կարեւորություն եւ դարձել է լրատվամիջոցների լայն քննարկման առարկա, ուստի թերթի կողմից դրան անդրադառնալը միանգամայն արդարացված է:

Ժանրային իմաստով հրապարակումը պարունակում է պամֆլետի, ֆելիետոնի որոշ տարրեր, որն էլ պայմանավորում է դրանում առկա քննադատական դատողությունների հեգնական տոնայնությունը: Ուստի, այդ արտահայտությունները «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի տնօրեն Փարավոն Միրզոյանի կողմից կարող էին ընկալվել որպես վիրավորանք, սակայն թե՛ իրավունքի եւ թե՛ լրատվական էթիկայի տեսանկյունից՝ դրանք այդպիսին չեն կարող համարվել:

Դիտորդ մարմինը գտնում է, որ հրապարակումից ակնհայտ է դառնում, որ դրա մեջ տեղ գտած արտահայտությունը՝ «Բայց պետք է խոստովանել, ... հայ հասարակության համար է աննախադեպ արվեստագետի կողմից արվեստագետին օրը ցերեկով անպատիժ կողոպտելը ...», հասցեագրված է հրապարակման հերոսին՝ Փարավոն Միրզոյանին: Այս մեղադրական պնդումները, որոնք, ըստ հոդվածագրի, հիմնված են արվեստագետ Սերգեյ Գասպարյանի բաց նամակի, ինչպես նաեւ «Հետք» օնլայն պարբերականի հրապարակումների վրա, խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը (քանզի Փարավոն Միրզոյանի մեղավորությունը կողոպուտի մեջ ապացուցված չէ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով), որի

պահպանման անհրաժեշտությունն ամրագրված է Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնի 4.5. հոդվածով:

Միեւնույն ժամանակ, Դիտորդ մարմինը գտնում է, որ բավարար հիմնավորված չէ «Չորրորդ ինքնիշխանության» ներկայացրած այն փաստարկը, որ հրապարակման մեջ վիճարկվող փաստերը վերցված են «Հետք» օնլայն պարբերականի էջերից, որի նկատմամբ Փարավոն Միրզոյանը որեւէ բողոք չի ներկայացրել:

«Հետք», փաստորենմ ոչ միայն ներկայացրել է նկարիչ Սերգեյ Գասպարյանի մեղադրանքները Փարավոն Միրզոյանի նկատմամբ, այլ նաեւ անդրադարձել է Հայաստանի ազգային պատկերասրահում ՀՀ դատախազության, ոստիկանության եւ ՀՀ մշակույթի նախարարության իրավասու բաժինների կողմից անցկացրած ստուգումներին: Այսինքն, պատշաճ կերպով ներկայացրել է խնդրի հետ կապված բոլոր տվյալները, մինչդեռ «Չորրորդ ինքնիշխանությունը» օգտվել է «Հետք»-ում Փարավոն Միրզոյանի դեմ հրապարակած մեղադրանքների մասից, այդպիսով խախտելով Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնի 2.4. դրույթը, որը կոչ է անում լրագրողներին՝ «հարգել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը, մեջբերումներ եւ արտատպություններ կատարելիս նշել աղբյուրները»:

Տեղյակ լինելով, որ Փարավոն Միրզոյանը դիմել է դատարան, ԴՄ-ն իր համաձայնությունն է հայտնում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Լինգենսն ընդդեմ Ավստրիայի գործում արտահայտած այն կարծիքի հետ, որ եթե փաստերի հավաստիությունը կարելի է ապացուցել, ապա գնահատող դատողությունների ճշմարտացիությունն անապացուցելի է, իսկ հոդվածում օգտագործվող արտահայտությունները ոչ թե փաստեր են, այլ հոդվածում բերված փաստերի հիման վրա արված եզրակացություն կամ գնահատող դատողություն (European Court of Human Rights, CASE OF LINGENS v. AUSTRIA, 08. 07.1986, Application No: 9815/82, Publication: A 103):

Դիտորդ մարմինը համարում է, որ վեճը գտնվում է լրատվամիջոցների էթիկայի ոլորտում եւ վեճի լուծումը տեսնում է«Չորրորդ իքնիշխանություն» թերթում Փարավոն Միրզոյանի կողմից ներկայացված հերքման կամ պատասխանի տեքստի հրապարակման կամ նույն թերթի կողմից ԴՄ-ի սույն եզրակացության տպագրման մեջ

Ընդունվել է Զանգվածային լրատվության էթիկայի դիտորդ մարմնի 2011թ. դեկտեմբերի 25-ի նիստին:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նաաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 48-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների վարքականոնով, որն ընդունվել է ինքնակարգավման մարմնի 2007 թվականի մարտի 10-ի ժողովում: